N 01/01- 693
«10» 06 2025թ.

«Վեբ Քեյ Էմ» ՍՊԸ-ի
Տնօրեն Հովիկ Գրիգորյանին
(հասցե՝ ք. Երևան, Լենինգրադյան 4 ա,
ՀՎՀՀ՝ 01006555, էլ. հասցե hovig@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Գրիգորյան.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Վեբ Քեյ Էմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 29.05.2025 թվականին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՏՊԱ-4-ՈՒԽ-3 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է ապրանքների մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Վաճառողը 30.05.2025 թվականին մատակարարել է պայմանագրի 1-ին և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ամբողջությամբ, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված 60 հատ օդի փափկացուցիչներից՝ 03.06.2025 թվականին մատակարել է միայն 28 հատը և կից ներկայացրել է գրություն, համաձայն որի հրաժարվում է մատակարարել մնացած 32 հատը:

Հիմք ընդունելով, որ «Վեբ Քեյ Էմ» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն պայմանագրի 2.4.1 կետի (Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեյով), «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի մասնակի լուծում է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՏՊԱ-4-ՈՒԽ-3 ծածկագրով պայմանագիրը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագրի կատարման ապահովման** գումարը կազմում է **12800** (տասներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ և **որակավորման ապահովման գումարը** կազմում է **19200** (տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվի վերոնշված գումարները և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացվի ՀՊՏՀ-ի գնումների բաժին, ապա «Վեբ Քեյ Էմ» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ _____ **Ա. Գրիգորյան**

Կատարող գնումներ համակարգող՝
Գոհար Թադևոսյան
հեռ.593-483